

ՅԱՐԳԱՆՔ ՄԻԻԹԱՐԵԱՆՆԵՐԻՆ

ՀԱՏՈՒԱԾ «ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ ԴԱՆՏԵՒ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ» ԳՐՈՒԹԵՆԵՆ

Երեւանի «Սփիւռֆահայտութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէ»ի
կողմէ դրկուած

Դանտէին մօտենալուց դեռ չառ տարիներ առաջ՝ Վենետիկի Միթիթարեան Հայրերը յատուկ համակրանք վայելեցին մի մեծ դանտէագէտ եւ ջերմ հայրենասէր իտալացու։ Դա իտալական Ռիսորջիմենտոյի շարժման նշանաւոր գործիչ, բաղմամբ աշխատութիւններէ հեղինակ եւ «Աստուածային կատակերգութեան» լաւագոյն մեկնարան Նիկոլոյ Թոմազէոն էր։ Թոմազէոն պատանի հասակից փոխադրուելով իտալիա եւ երկար տարիներ ապրելով Վենետիկում եւ Ֆլորենցիայում, իր կեանքը նուիրաբերեց իտալիայի քաղաքական ու հոգեւոր կեանքի վերածնութեանը։ Իր հայրենասիրական եռանդուն գործունէութեան համար՝ նա հալածուեց եւ, ի վերջոյ, 1848ին, բանտարկուեց աւստրիական իշխանութիւններէ կողմից, որոնց տիրակալութեան տակ էր այն ժամանակ «Ազրիականի թագուհին»։ Քաղաքական տիրակալների հալածանքը, սակայն, Թոմազէոյին դարձրել էր իր հայրենակիցների մտքերի ու հոգիների տիրակալ։ Եւ երբ աւստրիական իշխանութիւնները հարկադրաբար ազատ արձակեցին հայրենասէր բանտարկաւին, վենետիկցիք ուսամբարձ եւ ծափողջոյններով նրան տարան Մուրր Մարկոսի հրապարակը։ Նրա մահից յետոյ՝ յուշարձանը կոթողեցին իրենց քաղաքի հրապարակներից մէկում։ 1902ին, երբ լրացաւ համաթողութեան քաղաքացու եւ հայրենասնէր մտաւորականի ծննդեան հարիւրամեակը, Վենետիկում, Ֆլորենցիայում եւ Սերենիկոյում (Թոմազէոյի ծննդավայր՝ Դալմատիայում)

հանդիսաւոր կերպով վերակոչեցին նրա ողբնչոյ յիշատակը։

Մեր առաջադրանքից դուրս է այստեղ տալ Նիկոլոյ Թոմազէոյի հայրենասիրական եւ իմացական գործունէութեան բոլոր ոլորտները։ Մեզ հետաքրքրողը Թոմազէոյի կեանքի երկու փուլերն են. մէկը կապուած Դանտէի հետ, միւսը՝ հայ մշակոյթի հետ։ Հայրենասիրութիւնն ու մտահորիզոնի լայնութիւնը Թոմազէոյին մերձեցրին ու կապեցին «հայրենասիրութեան առաքել» եւ լայնախորհուրդ Դանտէին։ Նա այնքան խորացաւ դանտէական աշխարհի հետազոտութեան եւ դանտէական բնագրերի վերծանութեան մէջ, որ դարձաւ «Աստուածային կատակերգութեան» լաւագոյն մեկնարանը իր ժամանակ, եւ լաւագոյններից մէկը այննուհետեւ։ «Աստուածային կատակերգութեան» բնագրին հրատարակութիւնը Թոմազէոյի մեկնարանութեամբ (1865 թ.), վերահրատարակուել է բազմիցս մինչեւ մեր ժամանակները. ուրեմն, Թոմազէոյի մեկնութիւնները, իրենց հաւելումներով վաղեմութեամբ հանդերձ, պահել էին իրենց ինքնատիպ այժմէութիւնը։ Վերջին անգամ Թոմազէոյի մեկնութիւններով եւ շատ ճոխ նկարագրութիւններով (որոնց իրենց մասնակցութիւնն են բերել ժամանակի 50 ամենանշանաւոր իտալացի նկարիչներ) «Կատակերգութիւնը» լոյս տեսաւ 1864 թուականին, իբրեւ Դանտէի նախալորելիական հրատարակութիւն։

Նոյն հայրենասիրական դրացումով եւ մտահորիզոնի լայնութեամբ Թոմազէոն

մերձեցաւ ու կապուեց Վենետիկի հայ վանականներին, նրանց միջոցով ծանոթացաւ ու հմտացաւ հայ մշակոյթին, նրանց մեղուաջան մշակութային գործունէութեան մէջ տեսնելով այն նոյն ոգին, որ խօսում ու եռում էր իր մէջ։

Եւ ահա այս պատուական մարդը սիրով յանձն առաւ հայ վանականների խնդիրը՝ խմբագրելու Խորենացու եւ Աղաթանգեղոսի իտալերէն թարգմանութիւնները, որ կատարել էին իրենք, հայ մատենագիրներին իտալական հասարակութեանը ծանոթացնելու գովելի առաջադրանքով։ Աւելին. այդ երկու հրատարակելի գործերի համար նա դրեց երկու բովանդակից եւ շատ նշանակալից առաջաբաններ։ Թոմազէոյի խմբագրութեամբ եւ առաջաբանով Աղաթանգեղոսը՝ Ս. Ղազարի տպարանում լոյս տեսաւ 1843ին, իսկ Խորենացին՝ 1850ին։

Աղաթանգեղոսի դրքի առաջաբանի վերջում՝ Թոմազէոն գրել է. «Մեր երկու աղբերը, որոնք երբեմն տիրոջներ էին, հետադադու տիրուեցին եւ բաժան-բաժան եղան. նրանք մի որոշ ժամանակ կորցրին նոյնիսկ իրենց լեզուի անաղարտութիւնը եւ այժմ տենչալի սիրով նորից ձեռք են բերում այն։ Երանի՜ թէ Հայաստանի հին յիշատակարանների այս թարգմանութիւնը սիրոյ նոր կապ հաստատի իրարից հեռու, բայց հաւատով եւ վշտով համեման երկու քոյր ժողովրդների միջև»։

Խորենացու գրքի առաջաբանը աւարտում է ոչ նուազ յատկանշական խօսքերով. «Հայաստանը դանուելով քաղաքակրթութեան եւ բարբարոսութեան, հին եւ նոր աշխարհների, առեւտրի եւ գիտութեան միջեւ, պահում է իր նախահայրերի լեզուն եւ ճոխացնում իր օրինական ու հարուստ ժառանգութիւնը։ Թող Աստուած բեղնաւորի Ս. Ղազարի միաբանութեան ջանքերը։ Մի օր Եփրատի ու Տիգրիսի ափերին օրհնութեամբ պէտք է հնչի անունը այս կղզեակի, որ վենետիկեան հիւրընկալութիւնն իբրեւ ապաստան տուեց մտախոհութիւնների ու օրհնելութիւնների համար։ Այն ժամանակ

Վենետիկը չէր էլ մտածում, որ իր շնորհած վեհանձն պարգեւը իրեն համար պիտի լինէր տեսական դարդ, անցեալում արեան դնով ձեռք բերած իր բոլոր նուաճումներից աւելի»։

Մենք այսօր չառ լաւ գիտենք՝ աւելի քան հարիւրամեայ վաղեմութիւն ունեցող այս խօսքերի արժէքը։ Գիտենք, որ հայ եւ իտալացի ժողովուրդները վշտով ու հաւատով բախտակիցներ եղան, երբ պատմական դաժան դէպքերի բերումով՝ դարեր շարունակ, կորցնելով իրենց ազգային անկախութիւնն ու պետականութիւնը, ջերմութեամբ ու գուրդուբանքով փարուեցին իրենց հոգեւոր ժառանգութեանը, իբրեւ ողբերգի արտայայտութիւն իրենց անցեալ քաղաքակրթութեան եւ միաժամանակ իբրեւ յուսադրիչ կրօնական իրենց ազգային վերածնութեան։ Մենք գիտենք, որ իտալական ժողովուրդի ասպնջականութիւնը վայելող Ս. Ղազարի միաբանները վանական մեկնութեան ու լուսութեան մէջ՝ իրենց ընծայարկերցին հայ ժողովրդի հոգեւոր հարստութիւնների հաւաքման, մշակման, ուսումնասիրման եւ հրապարակման։ Մենք գիտենք, որ Ս. Ղազարի միաբանները անխոնջ ջանքերով կառուեցին մի ոսկէ կամուրջ՝ որը ծառայեց հայ եւ այլազգի մշակոյթների հաղորդակցութեան եւ փոխադարձ դնահատութեան։ Հայ մատենագիրներին իտալերէն, Ֆրանսերէն եւ անգլիերէն թարգմանութիւններով, իսկ օտար մատենագիրներին հայ թարգմանութիւններով՝ հրապարակումը եղաւ այդ ոսկէ կամուրջի ամենակարեւոր յենասիւնը։ Մենք գիտենք, որ Ս. Ղազարի միաբանները մեր ազգային կեանքի մուսլ մի շրջանում՝ բացառիկ դեր կատարեցին իրենց լուսաւորչական գործունէութեամբ եւ հայ լեզուի ու գաղութեան, հայ պատմութեան եւ հնախօսութեան շուրջ կատարած իրենց կոթողային աշխատութիւններով։ Մենք գիտենք, որ Վենետիկի Միթիթարեաններն իրենց բացած կրթութարանների եւ իրենց յօրինած ուսումնական ձեռնարկների, գաղափարների ու

բառադրքերի միջոցով՝ հայ մանկապարտեզների ընդհանուր կրթութեան եւ ազգային դաստիարակութեան համար անհրաժեշտ գիտելիքներ: Տուրքս դրոշմ, որ պատկեր է ունեցել լինելու աշխարհային կրթութեանը մէկի երբեմնի սանը, այսօր եւրասիական զգացումով գիտակցում է, որ իր գիտելիքների աշխարհը, որ արդաստուրութեան հայրենի հողի վրայ, ստացել է Միջինարեւելյան կրթական աւազակոյն հաստատութիւնից, որի գոյատեւութեան 130ամեակը հանդիսանում է նշանակալից Երեւանում, Սփիւքազայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի հանդիսարանում, 1966 թուականի սեպտեմբերի 23ին: Եւ վերջապէս, մենք գիտենք, որ Վենետիկի Միջինարեւելյան տունը իր երկու եւ կէս դար գոյութեամբ եւ նրանց «Բազմալեզու» հանդէսն ու Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը, իրենց մէկ եւ քառորդ դար եւ աւելի գոյութեամբ, եղան մշակութային ու կրթական ամենատեւական հաստատութիւնները՝ հայ կեանքում: Մենք այս բոլորը գիտէինք, եթէ նոյնիսկ չունենայինք Նալբանդեանի, Լէոյի, Զօպանեանի եւ այլ հեղինակութիւնների վկայութիւնները. որովհետեւ գիտենք, որ Միջինարեւելյան միարանների ջերմեռանդ սպասարկութիւնը հայ մշակութային տաճարին, եւ անձնուրաց ընծայարեւումը հայրենիքի հոգեւոր վերաշինութեան՝ կազմել են նրանց գոյութեան իմաստը. եւ վերջապէս, որովհետեւ, կիրառելով հին մի խօսքի յարասութիւնը՝ «Գործք պատմեն զիրան Միջինարեւել»:

Իտալացի ակադեմիկոս զանազանքի եւ հայագէտի գուշակութիւնն իրականացաւ: Միջինարեւելյան կղզեակի անունը ո՛չ միայն օրհնութեամբ հնչեց Եւրոպայի ու Տիգրիսի ափերին, այլեւ այսօր բարձրաձայն հնչում է Արաքսի ու Հրազդանի ափերին. որովհետեւ Մ. Ղազար կղզեակի Միջինարեւելյան հաստատութիւնը՝ Վիեննայի Միջինարեւելյան քոյր հաստատութեան հետ՝ իրենց առաքելութիւնը կատարեցին պատուով ու նուիրումով, «վասն Հայրենեաց եւ ազգին Հայոց»: Ի դուր չէ, որ

Միջինարեւելյան քոյր հաստատութեանց կարկառուն գէպերի անունները (Միջինարեւելյան Սերաստացի, Միջինարեւելյան Չամչեան, Ղուկաս Ինճիճեան, Ղեւոնդ Ալիշան, Յակոբ Տաշեան) ի շարք հայ մշակութային բազմաթիւ այլ պանծալի անունների, այսօր արձանագրուած են հայրենիքի Գիտութիւնների Ակադեմիայի ներքնասրահների որմերի վրայ:

Այսօր, հետք անդամ չի մնացել անցեալ դարերի վենետիկեան հոգային նրաւորութիւններից. բայց մնացել է Մ. Ղազարը, զանազան թոմարդէոյի հետաւում Ազրիականի թաղուհու: Վենետիկի քաղաքային ներկայ իշխանութիւնները խորապէս գիտակից, առ ի յարգանս իրենց ծոցում գոյատեւող հայ մշակութային նուիրական օջախի՝ մեծապէս նպաստեցին որ կրկնապատկ ընդարձակուի իրենց ծովափնի դարդը, մեր դարի 50ական թրականներին:

Այս, մենք այսօր շատ լաւ գիտենք իտալացի նշանաւոր զանազանքի մեծ մտքից ու ջերմ սրտից բխած խօսքերի իմաստը, ինչպէս որ գիտէինք աւելի վաղ արտայայտուած ջերմ յարգանքի հաւատարմութեանը՝ հանդէպ Միջինարեւելյան հաստատութեան՝ մի ուրիշ ժողովրդի գի մեծ գուշակի կողմից, ինչպիսին եղաւ Լորդ Բայրոնը, նոյնպէս Դանտէի մօլեռանդ սիրահար:

Եւ այլապէս քանի՜-քանի ակադեմիկոս անձինք, չծածկելով իրենց զննատանքի արտայայտութիւնները, ակնածութեամբ ու երկրազաւթեամբ իրենց զբաղումները խոնարհել են Միջինարեւելյան հանդէպ իրենց անհրաժեշտ վաստակի առջեւ:

Դանտէի առնչութեամբ աւելացնենք միայն, որ եթէ մենք այսօր քաղաքակիրթ աշխարհին ներկայանում ենք զանազան կան գործունէութեան մեր հարկւրամեայ պատմութեամբ, զա շնորհիւ է միայն Միջինարեւելյան գործունէութեան:

Երեւան, 1968

ԱՐԲՈՒՆ ՏԱՅԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԻ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ԱՂԱՅԵԱՆ ԷԴՈՒԱՐԴ Բ. - Լեզուարանութեան ներածութիւն. Բ. տպ. (Հրտ. Երեւանի Պետ. Համալսարանի): Երեւան, «Միտք» Հրտ. 1967, էջ 638:

ԲԱԴԱԼԵԱՆ Խ. Հ. - Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թուականին: Երեւան, Պետ. Հմտ. Հրտ. 1962, էջ 296:

ԵՆԳՈՅԵԱՆ ՓԱՅԼԱԿ Ի. - Հայաստանը ինդուստրացման ուղիով 1926-1958. (Հրտ. Երեւանի Պետ. Համալսարանի): Երեւան, «Միտք» Հրտ. 1967, էջ 364:

ՍԱՅԵԱՆ ԱՂԱՍԻ Ա. - Հայաստանի միջազգայն-իրաւական դրութիւնը 1920-1922 (Հրտ. Երեւանի Պետ. Համալսարանի): Երեւան, «Միտք» Հրտ. 1967, էջ 431:

ՇԱՐԱՐԱՆԻՆԵԱՆ Պ. - Գրարարի ուղեցոյց (վարժարաններ, քերականական կանոններ, ընթերցանութեան նիւթեր): Երեւան, «Միտք» Հրտ. 1967, էջ 152:

ՇՈՐԱ ՌՈՒՍԱԿԵԼԻ. - Պատմաքննական ուսումնասիրութիւն (վրացերէն): Թիֆլիզ, Վրացական ՍՍՌ Ակ. Հրտ. 1966, էջ 274:

ՇՈՒՇԱՆԵԱՆ ՎԱԶԳԵՆ. - Երկեր յիշատակաց: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1966, էջ 434:

ՈՐԲՈՒՆԻ ՉԱՐԵՆ. - Եւ եղև մարդ: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1967, էջ 337:

ՉԱՐԵՆԵԱՆ ԵՂԻՇԵ. - Քնարերգական, Արուեստ քերթութեան, Գիրք իմաստութեան ու երգիծական (Կազմեց՝ Պարոյր Սեւակ): Երեւան, «Հայաստան» Հրտ. 1967, էջ 362:

ՉՈՒԳԱՍՉԵԱՆ ԲԱՐԳԵՆ Լ. - Խրատք նուիրումների: Երեւան, ՄԱՍ ԳԱ Հրտ. 1966, էջ 211:

ՉՈՒՇԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ. - Երկեր: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1966, էջ 578:

ՊԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՇՈՏ. - Ծիծաղ: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1965, էջ 396:

ՊԱՏԿԱՆԵԱՆ ՌԱՓԱՅԷԼ. - Երկերի ժողովածու, հատոր Գ. Գ: Երեւան, ՄԱՍ ԳԱ Հրտ. 1966, էջ 617:

ՊՕՂԱՍԵԱՆ Ֆ. Գ. - Դատաստանագիրք Ասորականի Հայոց (Երեւանի «Մատենադարան»):

Հրտ.): Երեւան, ՄԱՍ ԳԱ Հրտ. 1967, էջ 359:

ՋՐԲԱՇԵԱՆ ԵԴ. - Թուրքի Սեւակ (Ստեղծագործութեան համառոտ ակնարկ): Երեւան, «Միտք» Հրտ. 1965, էջ 106:

ՍԱՅԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ Թ. - Մեծ Հոկտեմբերը եւ ազգային հարցի լուծումը Անդրկովկասում: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1967, էջ 196:

ՍԱՐԳՍԵԱՆ Ս. Հ. - Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում: Երեւան, «Միտք» Հրտ. 1967, էջ 416 (մեծագիր):

ՍԱՐԵԱՆ ԳԵՂԱՄ. - Հատուցում: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1966, էջ 144:

ՍԱՐԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ. - Գրառումներ իմ կեանքից: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1966, էջ 201:

ՍԱՐԵԱՆ Ս. - Գրական գիտողութիւններ: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 297:

ՍԱՐԵԱՆ Ս. Ն. - Հայկական ուսման ուղի: Երեւան, ՄԱՍ ԳԱ Հրտ. 1966, էջ 558:

ՍԱՐԵԱՆ Ա. Խ. - Թուրքական աղբիւրները Հայաստանի, Հայերի եւ Անդրկովկասի միւս ժողովուրդների մասին: Հատոր Բ.: Երեւան, ՄԱՍ ԳԱ Հրտ. 1964, էջ 337:

ՍԵՄԱ Ա. - Երկեր: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1966, էջ 355:

ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՆԺԵԼԱ. - Գունաւոր քայլեր: Երեւան, «Հայաստան» Հրտ. 1967, էջ 307:

ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ. - Լուծմունք «Ստորագրութեան» Արիստոտելի (համահաւաք քննական բնագիրը, թարգմանութիւնը գրարարից ուսուցչին, առաջարկը եւ ծանօթագրութիւնները Գ. Յ. Գրիգորեանի): Երեւան, ՄԱՍ ԳԱ Հրտ. 1967, էջ XXIII + 261:

ՎԱՀՐԱՆԵԱՆ ՎԻԿՈՐ. - Լուսարացի լուսարաց (ոտանաւորներ): Երեւան, «Հայաստան» Հրտ. 1966, էջ 135:

ՔՈՉԻՆԵԱՆ ԱՆՏՈՆ Ե. - Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտէի հաւուսու գեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIV համագումարին (1966, Մարտ 3): Երեւան, «Հայաստան» Հրտ. 1966, էջ 91:

ՏԱՐԵԱՆ ԲԱՐԵԳԻՆ		PRIX DE L'ABONNEMENT ANNUEL	
Իտալիոյ համար	3500 Լիր	Pour l'Italie	3500 Lires
Արտասահմանի համար	8 Տոլար	Pour l'Etranger	8 Dollars
Մէկ քիւլ . 250 Լիր -	0,50 Տոլար	Le Numéro: 250 Lires -	0,50 Dollar

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ» ՆՊԱՍՏՈՎ
 PUBLIE AVEC LE CONCOURS DE LA «FONDATION CALOUSTE GULBENKIAN»
 Direzione - Amministrazione - Abbonamenti - Isola San Lazzaro - 30100 Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia

